ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Իտալիայի Հանրապետություն (Հռոմ)
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Գայանե Բարսեղյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչություն, ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի պետ ժ/պ

   Հրայր Հակոբյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի զարգացման վարչության գործատուների հետ համագործակցության և աշխատանքային միգրացիայի բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Իտալիայի Հանրապետություն (Հռոմ), 2025 թվականի նոյեմբերի 10-ից 14-ը.

3. **Հրավիրող կողմը.**
   «Կարիտաս Ինտերնացիոնալիս» և «Կարիտաս Իտալիա» կազմակերպությունների հրավերով՝ «Հայկական Կարիտաս»-ի աջակցությամբ

4. **Գործուղման նպատակը.**
   Իտալիայի Հանրապետությունում միգրանտների, տեղահանված անձանց ընդունման, ինտեգրման գործընթացների, ոլորտային քաղաքականության և լավագույն փորձի ուսումնասիրում, փորձի փոխանակում:

5. **Քննարկված թեմաները.**
   - ✓ Պետական մարմինների, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ համակարգող հարթակներ,
   - ✓ Սոցիալական և տնտեսական քաղաքականության միջև համախմբվածություն,
   - ✓ Իտալիայի բազմաշերտ և ապակենտրոնացված մոտեցումը միգրացիայի կառավարման, սոցիալ-տնտեսական ներառման և արտակարգ իրավիճակներում աջակցության հարցում,
   - ✓ Տարածաշրջանային և մունիցիպալ դերերը քաղաքականության իրականացման, ընդունման ու ինտեգրման ծրագրերի կառավարման գործում,
   - ✓ Նախարարությունների, քաղաքապետարանների և ՀԿ-ների միջև գործերի կառավարում և կառավարման համակարգում,

- ✓ Սոցիալական ապահովության համակարգեր և ծառայությունների հասանելիություն,
- ✓ Տեղական «Կարիտաս» կենտրոնների դերը միգրանտներին հանրային ծառայությունների հասանելիության ապահովման գործում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ուսումնական այցին մասնակցում էին պետական հաստատությունների վարչակազմերի, միգրացիայի, ինտեգրման և արտակարգ իրավիճակների ծրագրերում ներգրավված «Հայկական Կարիտաս» ԲՀԿ, փախստականների ինտեգրմամբ և սոցիալ-տնտեսական զարգացմամբ ակտիվորեն զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Այցելություն կատարվեց «Կարիտաս Իտալիանա» կազմակերպություն, որը համակարգում է ավելի քան 200 «Կարիտաս» թեմական կազմակերպությունների գործունեությունը և զբաղվում է այնպիսի հարցերով, ինչպիսիք են աղքատության դեմ պայքարը, սոցիալական ներառումը, մարդասիրական արտակարգ իրավիճակներին արձագանքելը և ներգաղթյալներին ու փախստականներին աջակցելը: «Կարիտաս Իտալիանա»-ի պատասխանատուները ներկայացրեցին կազմակերպության գործունեությունն ընդգրկող բոլոր ոլորտները՝ անհապաղ մարդասիրական օգնությունից մինչև երկարաժամկետ զարգացում՝ համատեղելով խոցելի խմբերի լսումն ու ուղեկցումը սոցիալական խնդիրների կառուցվածքային վերլուծության և համակարգային փոփոխությունների քարոզչության հետ: Ներկայացվեց նաև Իտալիայի Հանրապետությունում կանոնավոր և անկանոն միգրացիայի կառուցվածքն ու վիճակագրությունը:

Կազմակերպվեց հանդիպում Իտալիայի ներքին գործերի նախարարության ներկայացուցչի հետ, ով ներկայացրեց, թե ինչպես են վերահսկում այնպիսի կարևոր գործառույթներ, ինչպիսիք են ներգաղթի վերահսկողությունը, ապաստանի տրամադրումը և փախստականների ընդունումը, քաղաքացիության և սահմանների կառավարումը, ինչպես նաև պաշտպանությունը բնական աղետներից և քաղաքացիական բնակչությունից: Հատկանշական է, որ Իտալիայում միգրանտները դիտարկվում են ոչ թե որպես խնդիր, այլ որպես ներուժ: Նշվեց նաև, որ ապաստան հայցողները ավելի քիչ արտոնություններ ունեն, քան փախստականի կարգավիճակ ունեցողները:

Կայացավ հանդիպում փախստականների ընդունման ազգային գործակալության (Sistema di Accoglienza e Integrazione (SAI)) ներկայացուցչի հետ: Գործակալությունը համարվում է Իտալիայում փախստականների, ապաստան հայցողների, առանց ուղեկցության անչափահաս օտարերկրացիների և այլ խոցելի միգրանտների ընդունման և ինտեգրման համար ազգային համակարգ, որի շրջանակներում ընդունելությունը հիմնված է փոքր, համայնքային ուղղվածության նախագծերի վրա,

որոնք խթանում են միգրանտների և տեղի բնակիչների միջև փոխգործակցությունը: Այս ապակենտրոնացված և մասնակցային մոդելը ընդգծում է Իտալիայի հանձնառությունը՝ անցնելու շտապ ընդունելությունից դեպի կայուն ինտեգրման ուղիներ, խթանելով արժանապատվությունը, մասնակցությունը և հավասար հնարավորությունները բոլոր շահառուների համար:

Այցելություն կատարվեց «Կարիտաս Ռոմա» և ընդունելության Կենտրոն, որտեղ ներկայացվեցին շահառուների ընդունելության առանձնահատկությունները, կարգավորումները և պայմանները:

Կազմակերպվեց հանդիպում Իտալիայի աշխատանքի նախարարության աշխատակիցների հետ, ովքեր ներկայացրեցին միգրանտների և փախստականների աշխատանքային ինտեգրման գործընթացը, աշխատանքի թույլտվություն ստանալու ընթացակարգը, զբաղվածության համակարգի որոշակի առանձնահատկությունները:
Կայացավ հանդիպում «Կարիտաս Ինտերնացիոնալ» կազմակերպության պատասխանատուների հետ, որի ընթացքում ներկայացվեցին ծառայության կազմակերպությունների համաշխարհային կոնֆեդերացիայի մասին, որը ներառում է մոտ 170 անդամ գործակալություններ և որոնք գործում են ավելի քան 200 երկրներում: «Կարիտաս Ինտերնացիոնալ» կազմակերպության առաքելությունն է ծառայել աղքատներին և խթանել բարեգործությունն ու արդարությունը ամբողջ աշխարհում: Իր ցանցի միջոցով կազմակերպությունը համատեղում է մարդասիրական ճգնաժամերի դեպքում անհապաղ օգնությունը երկարաժամկետ զարգացման ջանքերի հետ՝ սկսած աղետների վերականգնումից, միգրացիայի և փախստականների աջակցությունից մինչև առողջապահության, կրթության և տնտեսական արդարադատության ծրագրեր:

Այցելություն կատարվեց Իտալիայում ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ, որտեղ ներկայացուցիչները կարևորեցին ՄԱԿ-ի դերը Իտալիայում, ներկայացվեցին այն միջոցառումները, որոնք ուղղված են հակամարտությունների և հալածանքների հետևանքով տներից զրկված փախստականների, բռնի տեղահանվածների ու քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությանը և նրանց համար ավելի ապահով ու բարեկեցիկ ապագայի կառուցմանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում ֆորմալ որոշումներ չեն կայացվել, կողմերը փոխանակվել են կոնտակտային տվյալներով՝ հետագայում, ըստ անհրաժեշտության, կապ հաստատելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է շարունակել համագործակցությունը՝ փախստականների, ապաստան հայցողների և այլ խոցելի միգրանտների ընդունման և ինտեգրման ոլորտներում՝ ըստ անհրաժեշտության:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Գ. Բարսեղյան

Հ. Հակոբյան

19.11.2025